

Տես տես, Յիսուս, ապառաժուտ քիմ սրբորին՝
Յիշատակաւ սոցա՝ մասունք խրլըրտին .
Դամ է, ի թափ ուժոյ սիրոյդ եւ դու հար ,
Հարթեա՛ կազմեա՛ քոյ քաջաբոյս սերմանց յար .
Լքեգականս տապեալ նեղէ զիս խորշակ ,
Պասքեալս ի քէն հայցեմ արբումն ախորժակ :

Ղախ դու զոգիս, եւ տար ճեմել յայն պարտէզ .
Ինձ հանգիստ եւ բերկրութիւն գոն ընդ քեզ .
Պապեալ սիրով՝ կաց ընդ իս յայն անքոյթ կայս .
Լը ժըխտեսցես անարժանիս զիմորդ զայս ,
Սինչ քեզ պատճառ խոնարհելոյ ի վերուստ
Լը մըտանել յայս պարտէզ՝ մերս էր կորուստ :

ՅՈՎՍԷՓ ԵԱԶԸՃԵԱՆ
Աշակերտ Ռաֆ . Վարժարանի

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Փոնգալէն ետքը քարեկոշտ սովորութեանը վրայ:

Հաւանական է որ փոնգալէն ետեւ բարեւելու ընդհանուր եղած սովորութիւնը՝ սկիզբն ունենայ հին աւելորդապաշտութիւններէ . բայց ամենայն իսկ մէջ ալ հետաքննութեան պատճառ եղած է ասիկայ :

Սմանք այս սովորութեան սկիզբը Ս . Ղրիգոր սրբազան քահանայապետին հրամանին կու տան, որ հաստատեց կ'ըսեն համառօտ օրհնութիւն մը ժանտախտի մը ժամանակ, ուր հիւանդութիւնը փոնգալով կը սկսէր, և շատ անգամ մահուամբ կը վերջանար :

Հրէից ռաբունիք որ ամէն բանի ալ պատմութիւն մը յարմարեցած են, կ'ըսեն թէ Յակոբ նահապետէն առաջ մարդ մէկ անգամ միայն կը փոքն դար, ու փոնգալէն վերջը կը մեռնէր . և կը հաստատեն թէ այս նահապետը առջինը եղած ըլլայ բնական հիւանդութեամբ մեռնողներուն մէջ . ուստի իրմէ առաջ մարդիկ փոնգալով կը մեռնէին, և անոր համար ասոր յիշատակը ամէն իսկ մէջ ալ հրամայուեցաւ պահուելու, որ փոնգալէն վերջը

առողջութեան մաղթանք մը ընեն :

Ինչուան Լ'ըրիստոտէլ ալ կը յիշէ այս սովորութիւնը, թէպէտ անտեղի հետեւանքով մը՝ թէ փոնգալը աղէկ ոգւոյ նշան մը ըլլայ, որովհետեւ ուրիշ բնական բերմանց համար բարեմաղթութիւն չեն ըներ մարդիկ : Լ'պուլէոս, Պետրոնիոս ու Պլինիոս մատենագիրներն ալ կը յիշեն այս սովորութիւնը, ու անոր հնութեանը կը վկայեն : Լ'նոյն իսկ Լ'մերիկայի մէջ ալ այս սովորութիւնս տեսնուեցաւ՝ նոր գըտնրած ատենը : Ուրեմն ըսել է թէ ամէն տեղ կը բարեւեն զմարդ փոնգալուն համար :

() Ուարձալի պատմութիւն մը Ս . Նոմոդաբայի թագաւորներուն փոնգալուն վրայօք՝ կը ցուցնէ թէ ինքնակալ իշխանի մը փոնգալը ինչ պարտքեր կըրնայ դնել ազգի մը վրայ : Լ'ըբոր թագաւորը կը փոնգայ, իրեն մօտ եղողները այնպէս բարձր ձայնով կը բարեւեն զինքը, որ դրսի սրահին մէջ եղած մարդիկը կը լսեն, ու իրենց ուրախական ձայները ներսիններուն հետ միացնելով՝ քովի յարկերուն ալ կը լսեցնեն նոյն աղաղակը . հոն եղողներն ալ ձայնը ինչուան փողոցը կը հասցնեն, և անկէ բոլոր քաղաքին մէջ կը տարածուի . այնպէս որ թագաւորին մէկ

փոնգալովը՝ ահաւոր ձայներ կ'երևն հազարաւոր հոյատակաց բերնէն : Իսկ երբոր Սանաարայ թագաւորը կը փռն գայ , պայատականները շուտ մը երեսնին մէկդի կը դարձնեն , և ձեռունին աջ ծունկերնուն կը զարնեն :

Ըստ հնոց՝ փոնգալը նշան էր գուշակութեանց . ինչպէս աջ կողմը փռն գալը բարեգուշակ կը սեպուէր . Պլուտարքոս իմեմիստիկի վարուց մէջ կը պատմէ որ ծովային պատերազմէ մը առաջ՝ յաղթութեան նշան սեպուեցաւ փոնգալը : Սատուլլոս իր Լիմէ և Սեպտիմոս կոչուած զուարճարի բանաստեղծութեան նիւթ կ'առնու սիրոյ աստուծոյն փոնգալը , և կ'ըսէ թէ աստուածները երկնքին մէջ աջ կողմը փոնգալով՝ երկրիս վրայ ձախ կողմը կը հասնի . ահոր համար երբ երկրիս յաջողութիւնը կ'ուզեն , դէպ 'ի ձախ կը փոնգան , որ դէպ 'ի աջ լուսի երկրիս վրայ :

Լյուսի հին սովորութեան մը սկիզբը , յետ զանազան յիշեալ կարծիքներուն , մեզի կ'երևայ թէ կամայդ կարծուած գուշակութեանց համար է , և կամ մեծ ու վտանգաւոր դիպուածէ մը ազատելուն . որովհետեւ փոնգացողին եղած բարեմաղթութիւնն ալ այս կը ցուցնէ . վասն զի միշտ « Յաջողութիւն » կ'ըսուի անոր . ինչպէս որ մեր ազգիք ալ սովորաբար Տաճկաց բառով « Խեր ըլլայ » կ'ըսեն , անոնց Խայր օլա ըսածը . կամ « Բողջութիւն » , ըստ ուրիշ շատ ազգաց . հին ատեն մեր նախնեաց սովորութիւնն ու ըսածը այս բանիս մէջ չենք գիտեր : Խալապուց մէջ ընդհանուր սովորութիւնն է ըսել Բարեբաղդուիտէն (Felicità!) . Վաղդիացւոց՝ Ըսո ըլլից Ժոյ , այսինքն փափագներդ կատարուին (A vos souhaits!) . կամ Աստուած օրհնէ դէդ (Dieu vous bénisse!) . այսպէս կ'ըսեն նաև Ինգղիացիք (God bless you!) :

Հայտնի է որ այս խօսքերս շատ անգամ ոչ հաւատքով և ոչ հարկաւոր կարծելով մը , հապա հին սովորութեամբ ու քաղաքավարութեան օրէնքի պէս կ'ըսուին . և որովհետեւ այս օրէնքներս

շատ փոփոխական են , և երբեմն պատշաճը անպատշաճ կ'երևայ , ու անպատշաճը պատշաճ , այսպէս հիմա քանի մը տեղուանք այս սովորութիւնս ալ քաղաքավարութեան օրինաց կարգէն գործութեան մէջ , իբրեւ աւելորդ կամ ծիծաղական ու երբեմն ալ անպատշաճ . ինչպէս թէ որ հարկաւոր գործողութեան մէջ , կամ ծանր բանի մը վրայ խօսելու , ժողովքի ու ատենաբանու թեան ատեն , ևս առաւել եկեղեցւոյ սրբազան աղօթից ու արարողութեանց ատեն՝ մէկն ըստ դիպաց փոնգայ , կամ մանաւանդ ըստ կամաց քթախոտ քաշելով , քովիններուն բարե տալը թէ խօսքով ըլլայ թէ ձեռով մը՝ կարծեմ հին քաղաքավարութեան սովորութեան իրաւունք մը չկրնար տալ : Լյուս ըսածնու և Սոնամիդաբացւոց սովորութեան անյարմար չերևնար անշուշտ Տաճկաց պատմածն ալ իրենց Խիկալին վրայօք :

Լասրէտտին խօճայն իր աշակերտացը բռնադատելով պատուիրեր էր որ երբոր փոնգայ , ամէն բան թողուն և ուրախական ձայնով Խէր ըլլայ կանչելով՝ Ծափ զարնեն . աշակերտներն ալ չէին պակսեր ամէն անգամ մտադրութեամբ կատարելու իրենց խմատուն վարպետին դրած քաղաքավարական մէկ պարտքը : ()ր մ'ալ ինչպէս կ'ըլլայ , Լասրէտտին խօճայն ջրհորի մը մէջ ինկած կը տեսնեն , որ օգնութեան կը կանչէր . շուտ մը չուաններ կը բերեն , կ'երկնցնեն ջրհորին մէջ , և երբոր Լասրէտտին լաւ մը կը պըլլուի , ու կը սկսին զգուշութեամբ մը վեր քաշել . յանկարծ խօճային փոնգալը կու գայ . քաղաքավար աշակերտները ուրիշ բան չմտածելով՝ մէկէն կը թողուն չուանը , ու կը սկսին Ծափ զարնել Խէր ըլլայ Խէր ըլլայ կանչելով : Խեղճ Լասրէտտին ինքզինքը նորէն ջրհորին խորը գտնելով և ո՛վ գիտէ ուր տեղը ցաւը նեղով , փուճ տեղ ներսէն կը պոռար թէ հիմա ատենը չէր այդ սովորութեան . բայց աշակերտներուն ձայնէն ու Ծափէն իր ձայնը ըսել անկարելի է .

ղաւ . անոր համար պէտք եղաւ որ Զանայ՝ քիթը բռնէ , երբոր աշկերտները նորէն չուանը երկնցուցին ու առաջինէն աւելի մտադրութեամբ սկսան վեր քաշել . բայց դժբաղդութեամբ հազիւ թէ՛ Վասրէտտին ջրհորին կէսը կը հասնի , ինքզինքը չկրնալով բռնել՝ նորէն փռնդտալ մը փախաւ . աշակերտները գրեթէ իրենց կամացը դէմ չուանը ձեռքերնէն թողլով՝ առջի քաղաքաւաւրութեան ծափահար հանդէսը կատարեցին . որուն շնորհքովը՝ երրորդ անգամ վարպետին վեր քաշելով , կէս ջախջախած դուրս ելաւ : Ի՛նչէ ետեւ կարծեմ մէկու մ' ալ թողուցած պիտի չըլլայ՝ Վասրէտտին խօճայն որ իր փռնդտալուն ծափ զարնէն կամ քաղաքաւաւրական ձևեր ու ձայներ հանեն :

ԱՌԱԿ

Ժանդանային բռնած ինքանիներ :

Հարուած մ' ուսկից աշխարհք ամէն կը դողայ , Յաւ , զոր ցատուսն երկնից թափեց մեր վերայ երկրիս ըրած չարիքները պատժելով . Ժանտախան , ըսեմ յայտնի իրեն անուշով , Որ մէկ օրը կըրնայ դժոխք լեցնել , Անանոց դէմ պատերազմի էր ելեր : Ամենք չէին մեռներ , ամենքն այլ աղկար՝ Զինքն հոգացող մէկն ալ չըկար , Որ մեռնէին խալըսելու ճար փրկուէր . Ինչ համով կերն ալ անորժնին չէր շարժեր . Ոչ գայլն ոչ աղուէս ալ աչք չունէին Դիտելու անուշ ու սուրբ աւարին . Տատրակ տատրակէ հեռու կը փախչէր . Ո՛ւր ուրախութիւն՝ երբ կը պակսի սէր : Ժողովք կանչեց առիւծն ըսաւ . Սիրելիք , Կարծեմ պատիժ աս մեր մեղքին որ երկինք Այսչափ չարիք թողուց գալու վերանիս . Թող ամենէն յանցաւորը մէջերնիս Երկնից ցամառն ինքնանըւէր զոհ ըլլայ . Գուցէ եղբարցն առողջութիւնը գըտնայ : Հին պատմութիւնը կ'աւանդէ թէ շատեր Ասանկ ատեն իրենք զիրենք են զոհեր . 'Նայինք ուրեմն , (այլ չըլլայ թէ մեզ խաբենք) , Խիչձերնիս ի՛նչ ջուրի վերայ կը գըտնենք :

Ինծի գալով՝ իմաս շատ հեզու ոչխարներ Ողջ ողջ պատուեր լափեր անկուշտ եմ կերեր . Մեղք , անմեղներն ինձ ի՛նչ վընաս են տըւեր : Երբեմն անոնց հետ ալ սանկ փորս եմ նետեր

Հովիւներ :

Բանն ասանկ է . զոհ պէտք է նէ՛ կեցեր եմ . Բայց ամենքն ալ խոտովանին նախ՝ կարծեմ . Որպէս զի ճիշդ արդարութիւն կատարուի , Էն մեղաւորը մէջերնուս կորսուի :

Տէր իմ , ըսաւ աղուէսն , ո՛վ լաւ թագաւոր , Շատ փափուկ է քու խրդձմտանքդ իրաւ որ . Ի՛նչ , մէկ քանի անմիտ ոչխար ուտելով

Մեղք մի ըրիր . չէ , մանաւանդ

Պատիւ անոնց՝ փորիդ մէջը պահելով :

Հովիւներն ըսես նէ՛ աւելի

Անոնք են պատժելու արժանի .

Անոնք են անըզգամ այն ցեղէն ,

Որ զիրենք մեզի տէր կը կարծեն :

Աս որ ըսաւ աղուէսն , ամենք ծափ զարկին .

Անկէց ետեւ ոչ ոք բընաւ սիրտ չըրին

Վագրին , արջուն ու դազանաց ահարկու

Պարտապանաց մեղքերը խոր քըննելու .

Այն կատաղի կըռուովներէն ինչուան շուն

Մէյմէկ պըզտի սուրբ կը կարծես ըսածնուն :

Կարգը իշուն գալով՝ մէջ տեղն երբ եկաւ ,

Միտքըս կու գայ որ , ըսաւ ,

Օր մը դիմացս արօտ մ' ելաւ բերնիս մօտ .

Քաղցն էր ըսեմ , առիթն յարմար , թէ լաւ խոտ ,

Քիչ մ' ալ կարծեմ իս սատանան փորձեց հոտ ,

Զըգիմացայ ,

Լանկեկ լեզուս պըտըացուցի որչափ կըրցայ ,

Խըլէցի խօսն . ի՛նչ սուտ ըսեմ , մեղայ մեղայ :

Խօսքը բերանն էր դեռ , ամենքը պոռացին միաբան .

Քեզի պէս այ անըզգամ .

Ճարտարախօս գայլ մը ճառեց ցուցուց հոն

Թէ անիծած էշն էր արժան զոհուելուն ,

Այն վատ անարգ չարեացապարտ կենդանին :

Պըզտաբիկ մեղքը խեղճ էշին

Կախնոցի մեղք մը սեպուեցաւ ահագին .

Ի՛նչ ըսեւ է ուրիշին խօսը ուտել .

Մահը միայն բաւական է , պոռացին ,

Իր ատ եղեւնը ջընջել :

Ու գործքով ալ կատարեցին ըսածնին :

Զօրաւոր կամ տըկար ըլլալուդ համեմատ՝

Դատաւորք քեզ կ'ընեն պարտաւոր կամ անպարտ :

ԼԱՅՈՒՆԻՆ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ